

ՀԱՐԿԵՐՐ ՏԱԺԿԱՍՏԱՆՈՒՄ

ԳՍՐԵԳԻՆ ԽԱԺԱԿՆԵԱՆԻ

(Շարունակութիւն ')

Քրդական ապօրինի հարկեր: Ընթերցող, աւելորդ է խօսել այն տնտեսական քայքայիչ ազդեցութեան մասին, որ անում են քրդերի և այլ թափառական ցեղերի շարձակումները, թալանը, հրդեհները և սպանութիւնները խաղաղ ազգաբնակութեան տնտեսական կեանքի վրայ: Այնքան է դրւած այդ մասին, որ համարեան ամեն մարդ գիտէ: Բացի յրանից՝ մեր նպատակը չէ ուսումնասիրել տաճկահպատակ ռայայի կեանքի բոլոր երևոյթները, այլ միայն նրա վճարած հարկերն են մեր յօդւածի նիւթը:

Շատերը կարծում են, որ ծածկաստանը ներկայացնում է մի ամբողջ պետութիւն, թէև թոյլ և անկանոն: Այդ կարծիքը չափազանց սխալ է: Ծածկաստանը պարունակում է իր մէջ բազմաթիւ մանր ու խոշոր պետութիւններ: Նա զէնքի, ոյժի բացարձակ տիրապետութիւնն է: Այնտեղ օրէնքը խփում է նրան, գործադրւում է նրա վրայ միայն, ով վախենում է, ով ոյժ չունի յիմադրելու: Մինչև օրս էլ Արաբիայի անապատների բնակիչը միայն անունով է հպարտել տաճկական պետութեան: Նոյն վիճակին են Դերսիմի բոլոր աշիրէթները, Կորդւաց աշխարհի քրդերը, ձուլամբարիկի ասորիներն իրենց մելիքներովն ու Մար-Շիմոնովը, բազմաթիւ լեռնական եղբիւնները, ալբանացիները և այլն: Նոյն վիճակին էին մասամբ և՛ Զէյթունը, և՛ Սասունը, և՛ Շարախն ու Մոքսը սրանից մի քանի տարիներ առաջ:

Մինչև 1840—50 թւականները բոլոր Տաճկա-Հայաստանը, նսմանաւանդ նրա հարաւ-արեւելեան մասը գտնուում էր Քուրդ-Դերէբէկերի իշխանութեան տակ, ճիշդ այնպէս, ինչպէս այսօր Դերսիմը գտնուում է մի քանի բէկերի կամ աղաների ձեռքում: Դերսիմը չի վճարում պետութեանը ոչ հարկ, ոչ զօրք: Բոլոր Դերսիմցիք մի տեսակ անկախ պետութիւն են կազմում տաճիկ պետութեան սահմաններում: Դերսիմը չի ճանաչում ոչ տաճիկ պաշտօնեայ, ոչ աշար, ոչ արագիէ հաւաքող միտարներ և միւլլթէզիմներ: Նա չի մտնում նաև 1890 թւերից կազմող համիդիական քուրդ ձիաւոր զօրքի մէջ: Նա բացարձակ անկախ է, միայն նրա անկախութիւնը չի ճանաչւած ուրիշ պետութիւններից (գիտէ և փաստացի կերպով ընդունում է միայն Տաճկաստանը), ինչպէս Ձեբէլէ-Լիբնանի ինքնուրոյն վարչութիւնը:

Ճիշդ Դերսիմի շրջութեանն էին (աւելի մեծ չափերով) Դերբէկերը մի քանի Դար շարունակ Հայաստանի մի մասում, այն է՝ Վանի, Բաղէշի, Մուշի, Բայազէշի և Դիարբեքիի նախկին վիլայէթներում, ուր թուրք ազգաբնակիւթիւնը համարեան բացակայում էր: Տաճիկ պետութիւնն ունէր իր փաշաները կամ անւանական վալիները միայն մեծ քաղաքներում, ինչպէս Դիարբեքիում կամ Վանում: Նրանք այդտեղ համարեան ոչ մի իշխանութիւն չունէին. ամեն բան Դերբէկերի ձեռքին էր, մի քանի մեծ քաղաքներից Դուրս, և այդ բեկերը չէին ճանաչում տաճիկական իշխանութիւնը: Օրինակ՝ 1747-ին Էրզրումի Սէր-Ասկէր Իբրահիմ փաշան պատերազմ մղեց Մուշի տէր Ալադդին-բեկի դէմ և չկարողացաւ նրան յաղթել ու հպատակեցնել: 1777-ին Դիարբեքիի Ուզուն-Աբդուլլահ փաշան կուրի բռնեց քուրդ Դերբէկերի և լեռնական հայերի հետ և իր 30,000 զօրքով ոչնչացաւ: 1782-ին Դիարբեքիի մի ուրիշ փաշա կուրի բռնեց փանդի քրդերի և հայերի հետ, 500 զինւոր կորցրեց, յաղթեց ու փախաւ, և այլն, և այլն:

Ժամանակը յաւաք էր շարժում, նրա հետ և տաճիկ պետութեան կենդանացումը: Կենդանացման այդ զարգացումը հասաւ այն կէտին, որ վերջապէս 1835-ին Աշիդ-փաշան կուրի բռնեց Խան-Մահմուդ Դերբէկի հետ և իշխելով նրա ոյժը, հպատակեցրեց, իսկ 1847-ին Օսման փաշան ջարդեց Բեդրխան-բէկի բանակը և

նւաճեց Քրիստոսնի հարաւային մասը: Թէ խան-Մահմուդը և թէ Բեդրխան-բեկը գերի բռնեցան և աքսորեցին՝ մէկը Սիլիստրա, իսկ վերջինը—Կրեմէ:

Միայն այդ չաղթութիւններից յետոյ էապէս սկսեց տաճկական տիրապետութիւնը Հայաստանի հարաւարեւելեան մասերում: Քրիտական Դերէբէկերի վերջին ապստամբութիւնը տեղի ունեցաւ Եզդիշարի (Բեդրխան-բեկի եղբոր որդու) առաջնորդութեամբ, 1854 թւին: Եզդիշարը 60.000 քրդերով, օգուելով Խրիմի պատերազմի յառաջացած խառն վիճակից, մերժեց հպատակել Սուլթանի կառավարութեան, հրատարակեց իրեն տէր Բաղդադից մինչև Վան եղած բոլոր երկիրների, կոտորեց ու շուրս վռնտեց տաճիկ բոլոր պաշտօնեաներին (առարկելով, որ այս կողմերում իսկապէս տաճիկ ազգաբնակչութիւն չկայ, ուրեմն ձեր ներկայութիւնն աւելորդ է) և իր զօրքով բանակ Դրեց Բաղէշի վիլայէթում: 1855-ին տաճկական զօրքը կենդրոնացաւ Բաղէշի մօտերը: Փաշան հրաւիրեց Եզդիշարին բանակցութեան և, շաւաճանելով իր երդումին, նրան կալանաւորեց և ապստամբութիւնը ճնշեց փոքր առ փոքր:

Քրիտական խոշոր տիրապետութիւնը ճնշեց ու նւաճեց, բայց քիւրդն անձամբ երբէք հպատակ չեղաւ: Մինչև օրս էլ բազմաթիւ լեռնական քիւրդ աշիրէթներ բոլորովին անկախ կեանք են անցկացնում: Միայն արդիւնքն աւելի վատ եղաւ Դաշտաբնակ երկրագործ ազգաբնակչութեան համար: Առաջ միայն քիւրդ բէկերն էին առնում հարկը, այն էլ միայն իրենց զօրքերի պէտքերի և լաւ ապրուստի համար—ամեն բան մթերքներով: Երկրագործը, որքան էլ առնէին նրա աշխատանքի նոյն իսկ $\frac{1}{2}$ -ը, միւս կիսով կարող էր ապրել: Իսկ երբ պետութեան ձեռքն ընկաւ, սկսեցան անվերջ հարկերը: Այդ էլ կարելի էր տանել, միայն եթէ պետութեան կենտրոնացման գործողութիւնը մինչև ծաղր տանէր: Քրիտական լայն տիրապետութիւնը ոչնչացաւ, բայց մնացին բազմաթիւ զինւած, անկախ աշիրէթներ, որ իրենց շրջանում հանդիսանում են իբր երկրորդ տէրեր: Պետութիւնը մի կողմից է հարկ հաւաքում, քուրդ բէկը միւս կողմից ժողովուրդը մնում է երկու կրակի մէջ. ոչ մէկին մերժել չի կարող: Մէկը պետութիւն է, ունի զաբթիէ, ասարի, թնշանօթ, Դաւարան, բանակներ և այլն. միւսը զինւած

քիւրդ աշիրէթ է: Երկուսն էլ ուզում են, անվերջ ուզում: Ո՞րին տայ, հրին կշտացնի: Իսկ ժողովուրդն անզէն է, ատրճանակի, հրացանի ու թնդանօթի չէմ նա միայն մի բերդ ունի չէմ գնելու՝ իր բաց կուրծքը...

Քուրդ բէկերի իշխանութիւնը ոչնչացնելով և քրդին վերջնականապէս զսպել, խաղաղ պարապմունքի անցկացնել, զէնքը ձեռքից խլել չկարողանալով՝ պետութիւնը դրեց նրան աւազակի դիրքի մէջ: Երբ մարդ համոզւած է, որ երկրագործը զէնք չունի և զիրէ, որ պետութիւնն անզօր է իր ետեւից ընկնելու լեռների և ժայռերի ծերպերում, աւելի ուրախութեամբ ապրուստի հեշտ միջոցը կ'ընտրի, քան աշխատանքը. — նա աւազակ կը դառնայ:

Քրդի հարկը զէնքի պահանջն է: Նա գալիս է անզէն հայի գիւղը, պահանջում, որքան իր քէֆն է տալիս, առնում, գնում է: Նա հարկ է առնում, որ հայի հետ հաշտ ապրի, նրան չկոտորի: Դրա համար էլ այդ հարկը կոչւում է Սուրէտն կամ Հաշտութեան գին: Հայկական գաւառներում ամեն հայ գիւղացի ունի մի քիւրդ աղա կամ բէկ կամ պաշտպան: Այս ինչ գիւղը, օրինակ, Մարտեկինն է, նրան է հարկ տալիս, որ Մարտեկը պաշտպանի նրան ուրիշ քրդերի յարձակումներից ու թալանից: Եւ քուրդը բարեխղճօրէն յաճախ յարգում է իր նմանի այդ սնտիականութեան իրաւունքը: Բայց քիչ չեն նաև նրա խախտումները: Այդպիսի շէպքում երբեմն աշիրէթները, մի հայ գիւղի հարկի համար, սկսում են անվերջ «արեան կռիւներ» վարել իրար չէմ, արեան վրէժ կամ վենդիտի տալ լուծել իրարից: Բայց այդ բոլորից տուժողը նորից խեղճ աշան է. յաճախ երկուսն էլ հարկ են առնում զէնքի ուժով:

Քուրդը հարկ է առնում մեծ մասամբ մթերքներով և աւելի քիչ՝ հնչիւն դրամով: Նա տանում է ցորեն, գարի, մեղր, ձի և այլն: Նրա վերցրած հարկերը ոչ որոշ չափ ունին, ոչ ժամանակ և ոչ սահման. երբ, որքան, ինչ ձևով ուզենայ կը տանի զինւած մարդն անզէնից:

Շատ յաճախ կը լսէք, որ քուրդն ասում է մի հայի մասին. դա իմ ֆլլաս է: Դա նշանակում է, որ այդ հայը այդ քրդին հարկ է տալիս:

Քրդական հարկերի կամայական ձևի մասին դաշտափար տալու

համար յիշենք միայն մի հարկի անուն, որ մի տեսակ անեկդոտի բնաւորութիւն ունի: Դա դիշ քիւրէսին է—ապամի քրէհը: Զինւած քուրշը մտնում է անգէն հայի տունը, հիւրասիրւում, ուտում, խմում և ապա գնալու ժամանակ հարկ պահանջում իր ատամնե-
րի համար: Վերայ, ադամներս աշխատեցին, ադամներիս համար քրէհ տւէք: Ահա այդ հարկի տրամաբանութիւնը: Եւ հայը պար-
տաւոր է տալ. չորեք... զնդակ կայ... կուրծք ծակող գնդակ...

IV

ՀԱՐԿԵՐԸ 1877-ի ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ԱՌԱՋ ԵՒ ՅԵՏՈՅ

Վերս ում յիշած բոլոր հարկերը գոյութիւն ունէին այս դա-
րի կէսերից սկսած, բայց նրանք կործանեցին ազգաբնակութեան
ամբողջ տնտեսութիւնը միայն վերջին 20 տարիների ընթացքում:
«Ինչո՞ւ նրանք իրենց աւերումն սկսեցին երեւան հանել 80-ական
թւերից միայն և ոչ, օրինակ՝ 50-ական թւերից», կարող է
շատ բնականօրէն հարցնել ամեն մի ընթերցող: Եւ նա իրաւունք
ունի. եթէ երկրի հարկերի մէջ ոչ մի խոշոր փոփոխութիւն չլինէր,
նրանք հաւանաբար այնքա՞յ քայքայէին գիւղացուն և 50-60 թւե-
րին, և 80-90 թւերին: Դրա բացատրութիւնը մասամբ և՛ շատ
պարզ է, և մասամբ շատ բարդ:

Երբ Տաճկահայաստանի մեծամասնութիւնը Դերէբէկեի ձեռքն
էր, ժողովրդի հարկը համեմատաբար և շատ թեթեւ էր, և ամէն
ինչ վերցւում էր գլխաւորապէս բերքերով: Եթէ գիւղացին ունէր
12 քիլա ցորեն (քիլան 7 փութ և 8 Փ.), 40 ոչխար և այլն, բէկի
մարդիկը գալիս, չափում և, ենթադրեմք, տանում էին նոյն իսկ
 $\frac{1}{4}$ -ը կամ $\frac{1}{3}$ -ը. այնուամենայնիւ երկրագործին մնում էր 8-9 քի-
լա ցորեն, 27-30 ոչխար... Էլի դրանով կարելի էր բաւական հան-
գիստ ապրել: XVII-XVIII դարերից այդ երկրի ներքին կեանքից
մեզ հասած հալո ու կտոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ
ազգաբնակութեան կեանքը թէև այնքան ապահով չէր, բայց տըն-
տեսական խոշոր ճգնաժամերը չէին թագաւորում այնպէս, ինչպէս
այժմ այդ լինում է նոյն երկրում:

Երբ Դերէբէկերը ոչնչացան և երկիրը վերջնականապէս ընկաւ
Տաճիկ կառավարութեան վարչութեան տակ, կառավարութիւնն

սկսեց հարկեր նշանակել, միայն թէ այդ հարկերը թէ թուով քիչ էին, թէ չափով—տանելի:

Այդ երկրի պետութեան ձեռքն անցնելու սկզբնական շրջաններում (1830-50 թւերին), օրինակ, աշարը, բացի ցորնից ու գարուց, ուրիշ երկրագործական արդիւնքների վրայ էր տարածւում: Այգիները համարեա ազատ էին աշարից, բոստանները, չայիրները, խոտը, առուոյրը նոյնպէս: Այն ժամանակ չկար եօլ-փարասին, չկար ուէժին, չկար Դէրան-ուժումիէն, չկար բազմանդ-փարասըն, չկար թեմէթ-թօհաթը, չկար գիլդիան և այլն, և այլն:

Բացի այդ բացակայութիւնը, եղածներն էլ անհամեմատ աւելի քիչ չափերով էին: Այսպէս, օրինակ՝ 1840-ական թւերին և աւելի առաջ բեդէլը-էսկերիէն հազիւ 100 փարա կամ $2\frac{1}{2}$ Դահեկան էր ամեն մի արու անհատից, չհաշւելով ֆնասւածները և 15 տարեկանից փոքրները: Սուլթան Մեջիդի և Սուլթան Ազիզի (Սուլթան Համիդի երկու նախորդների) օրերով այդ հարկի չափը աւելացաւ և ամեն մի ծխից, մինչև 77-ի պատերազմը, վերցնում էին միայն 20 Դահեկան զինուորական տուրք, քանի հոգի էլ լինէր նրանում: Քիչ էր և արագիէն (հողացին հարկը) կամ Սալիհանը, ինչպէս ասում էին այն ժամանակը (Սալ-արաբերէն է—նշանակում է տարի): Մի հող, որի վրայ կարելի էր 20 քիլա ցորեն ցանել, պետութեան հարկ էր տալիս միայն 100 Դահեկան (մինչև 1877-ի պատերազմը), իսկ այժմ ամեն մի քիլա ցորենի տեղի (4 Դոնում հող) համար պէտք է վճարել 100 Դահեկան, այսինքն 20 անգամ հարկը մեծացել է: Շտապել է և էմլաքը—շինութիւնների հարկը: Նոյն չափերով մեծացրել են և միւս հարկերը: Առաջ օրէնքով աշար վերցւում էր երկրագործի արդիւնքի միայն $\frac{1}{10}$ -ը, իսկ այժմ նոյն օրէնքը պահանջում է $\frac{1}{8}$ -ը: Առաջ ամեն մի այծի կամ ոչխարի համար առնում էին $\frac{1}{4}$ Դահեկան, իսկ այժմ առնում են $4\frac{1}{2}$ Դահեկան և այլն:

Այստեղ մի փոքր փակագիծ: Մինչև վերջին պատերազմը Ցաճկաստանը Դպրոցների մասին չէր էլ մտածում. իսկ պատերազմից յետոյ լուսաւորութեան կարիք զգաց և աշարը մեծացրեց, որ նրա աւելացած մասով միլլէթ-մնքթէքի-ներ (ժողովրդական կամ ազգերի Դպրոցներ) բանայ: Եւ յիրաւի, բացւեցան այդպիսի Դպրոցներ:

Կարնի այդ հաշուով բացւած Դպրոցի շէնքը նստել է մօտ 6-7,000 ոսկի (56-67 հազար ռուբլի), Խարբերդիները նոյնպէս, այն ինչ այդ արհեստից հասկացող անձերի վկայութեամբ Դրանք հազիւ արժեն 1000-1500 լիրա: Մնացածը կլանել են մեծորկոր պաշտօնեաները... Այդ նպատակով հաւաքւած փողը շատ յաճախ անցնում է զինեորական մինիստրութեան ձեռքը, յաճախ, աւելի յաճախ շոգիանում է գանձարանից... Իբր թէ այդ Դպրոցներում պէտք է ընդունէին բոլոր հպատակների զաւակները, առանց կրօնի և ազգութեան խտրութեան. բայց գործին մօտ մարդկանց վկայութեամբ մի հատ քրիստոնեայի երեսայ չի յաճախում այդ Դպրոցները... այն ինչ հարկի մեծ մասը նրանց մէջքի վրայ է բարդւած...

Բէկերի տիրապետութեան ժամանակ ամեն հարկ վերցւում էր մթերքներով. Դրա համար գիւղացու տնտեսութիւնը չէր քայքայւում, իսկ երբ պետութիւնը միգրեց փողային հարկերը, մանաւանդ շատացրեց նրանց և՛ թիւը, և՛ քանակութիւնը՝ գիւղացու խորամատ Դարեոր տնտեսութիւնը սկսեց նախ հիւժւել կամանց-կտմաց և ապա, պատերազմից յետոյ, ճաթճաթելով ու ճոճըռալով քայքայելի մինչև այն աստիճան, որ երկիրն ընկաւ համաճարակ աղքատութեան կամ պառպերիզմի գիրկը. նրա քրիստոնեայ ազգաբնակչութիւնը գաղթականութեան ցուպին ձեռք զարկեց, Դարձաւ թափառաշրջիկ, մոլորացկան, օր հացի կարօտ: Իսկ միւս կողմում հարուստ հողը մնաց առանց մշակող ձեռքերի, հաւաքւեց, կենտրոնացաւ մի քանի սակաւաթիւ ուժեղ ձեռքերում կամ անտէրացաւ ու խոպանացաւ:

Քննենք այժմ այն անտեսանելի պատճառը, որ քայքայեց երկրի տնտեսական կեանքը, երբ փողային հարկը օր Դրեց շէնքից ներս: Դա կարեոր երևոյթ է. արժէ Դրա վրայ կանգ առնել: Իսկ այդ երևոյթը պարզ ըմբռնելու համար, պէտք է մի քիչ գէթ ծանօթ լինել Տաճկաստանի ներքին, ասիական գաւառների տնտեսական Դրութեան, նրա զարգացման, նրա հաշորդակցութեան ճանապարհներին հետ:

Երկրի ազգաբնակչութեան խոշոր մեծամասնութիւնը գիւղացիական Դասն է իր երկրագործական և խաշնարածական զբաղմունքներով: Քաղաքների թիւը համեմատաբար շատ քիչ է: Մեծ քա-

ղաքներ բոլորովին չկան. Դրանցից ամենամեծերն են մեզ հաս-
քըքրող սահմանների մէջ՝ Գիարբքերը, Էրզրումը, Վանը. Դրանք
էլ հազիւ թէ մինչեւ 100 հազարական բնակիչ ունենան (Ճիշդ թւեր
չկան. հաշոււմ են մօտաւորապէս 60-65 հազար Վանի, նոյնը և
Էրզրումի համար): Եղած քաղաքներն էլ Դեռ ևս ամբողջովին չեն
Դուրս եկել՝ այսպէս ասած՝ զիւղական շրջանից: Քաղաքի կեդրոն-
ներում վաճառանոցներն են և արհեստանոցները, վարչական և ազ-
գային հիմնարկութիւնները, իսկ քաղաքի շուրջը, մի համակենտրոն
շրջանով պարփակում է քաղաքային երկրագործը (Ռաշպար), որ ներ-
կայացնում է մի տեսակ զիւղ քաղաքի մէջ. Դա մնացորդ է զիւ-
ղական կեանքի. կամ մի տեսակ անցողական, միջին Դուրսութիւն է
բուն քաղաքի և զիւղական կեանքի:

Մի երկրի կուլտուրական զարգացումը խիստ կերպով կապւած
է նրա քաղաքների թւի շարունակական և նրանց բնակիչների առա-
ւելութեան հետ: Որքան մի երկիր կուլտուրապէս զարգանում է, այն-
քան նրա քաղաքները թւով շարանում են և նրանց միջի բնակիչ-
ները բազմանում: Ազգաբնակչութեան այդ կենտրոնացումը քաղաքնե-
րում բնական արդիւնք է մեր ներկայ պատմա-դիմագիտական շրջանի
կուլտուրական զարգացման ճակատագրական պայմանների: Այսօր
ամենակուլտուրական երկիրները համարւում են Անգլիան, Միացեալ
Նահանգները, Գերմանիան և Ֆրանսիան: Եւ Դրանց պէս էլ համե-
մատաբար աւելի շատ և աւելի բազմամարդ քաղաքներ ունեցող
սլեյտութիւններ չկան:

Անցնում ես մի 2—300 վերստ Զւիցերիայով, պատահում ես
15-20 քաղաքների, իսկ եթէ այդպէս 2 տարածութիւն անցնես
Տաճկահայաստանում, հազիւ թէ 4—5 քաղաքի պատահես—այն էլ
կէս քաղաք—կէս գիւղ: Սա կուլտուրական ծայրայեղ յետամնացու-
թիւն է:

Երկրի ազգաբնակչութիւնը Դեռ ևս երկու որոշ մասեր ունի.
նոտակեաց-երկրագործներ և թափառական-խաշնարածներ: Թափա-
ռական ցեղերը Դեռ ևս ապրում են սոցիոլոգիայի մէջ լաւ յայտնի
«Խորքարոտական» շրջանի սահմաններում: Նրանց մէջ կը տեսնէք
Դեռ ևս գետնը կամ կլանը (տոհմ), ցեղը կամ արիբիւն (աշիրէթ),
ցեղերի Դաշնակցութիւնը, ամուսնութեան նախկին ձևերի մնացորդ-

ները, աղջիկ փախցնելը և այլն: Մասնաւոր սեփականութեան հասկացողութիւնն այնքան թույլ է, այնքան քիչ է յարգւում և ցեղային համայնական սեփականութիւնը շեռ ևս այնքան թարմ յիշատակներ ունի նրանց մէջ, որքան Հոմերական շրջանի յոյների կամ բազմաթիւ աֆրիկական Նեգրների մէջ: Մարդկութեան զարգացման ներկայ պերիօդում կուլտուրական զարգացման հետ ձեռք ձեռքի տւած գնում է և աւերիչի սեփականութեան, աւերիչի անհնաւորութեան, յարգանքի զարգացումը: Գողութիւնը, յափշտակութիւնը, թալանն աւելի շատ են յետամնաց ազգերի մէջ: Սրա պատճառը, բացի ոճրային և այլ պայմաններից, նաև մասամբ անհատական մասնաւոր սեփականութեան զաղափարի խոսկ վիճակն է:

Երկրագործ ազգաբնակչութիւնը գտնւում է իսկական միջնադարեան վիճակի մէջ: Հողագործութիւնը, մեղաբուծութիւնը, կաթնադնտեսութիւնը, այգեգործութիւնը և այլն կատարւում են բոլորովին սկզբնական, նահապետական ձևերով:

Եւրոպայում ձեր արած ամեն մի քայլը շրջապատւած է անվերջ մշակւած հողերով. այնտեղ յաճախ գիւղերն իրար հետ միանում են, ամեն մի քայլափոխից մի գիւղ, մի քաղաք ես պատահում: Իսկ այստեղ երբեմն օրեր ես գործ դնում, որ մի գիւղից միւրը հասնես. հողերն էլ անվերջ քանակութիւններով անմշակ ընկած են: Ազգաբնակչութիւնը նոսր է, սպանիչ կերպով նոսր:

Մի կուլտուրական երկրի ամենաառաջին նշանն է նրա հաղորդակցութեան միջոցների զարգացումը և տեսակները: Աշխարհի մէջ սկզբնական ամենամեծ քաղաքակրթութեան որրանները եղել են նաւարկելի մեծ գետերի ափերին. Նեղոս, Գանգէս և Ինդոս, Ամուդարիա և Սիր-Դարիա, Եփրատ և Տիգրիս (Միջագետքի մասերը միայն), Դեշին գետ և այլն: Երկրորդ քաղաքակրթական շրջանը ծովերի ափերումն է զարգացել. Փիւնիկիա, Յունաստան, Իտալիա, Սիցիլիա, Կարթագէն, Անգլիա, Պորտուգալիա, Իսպանիա, Բելգիա, Հոլլանդիա և այլն: Երրորդ շրջանը ցամաքայինը կամ համաշխարհային շրջանն է. այստեղ գործում են խճուղիները, երկաթուղիները, շոգենաւերը—գետը, ծովը, ովկիանոսը, էլեքտրականութիւնը և այլն: (Տես Մեշնեկով—Les grandes fleuves historiques et la civilisation):

Պատմական Հայաստանի Դժբաղդութիւնն է եղել նաւարկելի

գետեր, յարմար ծովային ճանապարհներ չունենալը: Իսկ այսօրւայ Հայաստանը կարող է քաղաքակրթութեան մէջ մտնել, առաջադիմել միայն ցամաքային ճանապարհներով: Այդպիսի ճանապարհներ Տաճկահայաստանում բոլորովին գոյութիւն չունին: Երկաթուղիների մասին խօսելն անգամ աւելորդ է. մնում է խճուղին: Իսկ խճուղի, ինչպէս մի անգամ էլ ասացինք, մենք միայն մէկը գիտենք հայկական ճանաչւած 6 վիլայէթների (Կարնի, Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի, Խարբերդի և Սըւազի) շրջանում: Այդ միակ խճուղին Տրապիզոնից մինչև Կարին է տեւում, այն էլ, ձեռնհաս մարդկանց ասելով, այսօր անանցանելի է և բարձիթողի է արւած ճանապարհորդների կողմից. խճուղին թողնում և գիւղական ճանապարհներով են գնում... այնքան փառաւոր վիճակի մէջ է այդ միակ ճանապարհը:

Հաղորդակցութեան միակ միջոցը կարւանն է՝ ձին, ջորին, ուղտը, էշը... Իսկ դրանցով շատ հեռու չի կարելի երթալ. դրանով վաճառականութիւն, ներքին արդիւնագործութիւն չի կարող զարգանալ. նամանաւանդ այն ժամանակ, երբ քո անմիջական դրացիներն ամեն ինչ կաւարում են գիւղութեան վերջին միջոցների օգնութեամբ և՛ լաւ, և՛ աժան. նամանաւանդ երբ ունիս մի պետութիւն, որ գէնքի և փողի ուժի տակ ճնշւած, ամեն մի պետութեան վաճառականութեան առաջ ստիպւած է ազատ բանալ իր շուները, առանց պահանջողական տարիֆների, առանց իր ներքին արդիւնագործութեան վրայ ուշք դարձնելու...

Արդիւնագործութիւնը բոլորովին միջնադարեան է: Երկրագործութեան և խաշնարածութեան համար արդէն խօսեցինք: Նոյնն են և՛ արհեստները, և՛ ինչուսորիան: Ամբողջ երկրում մի գործարան չէք գտնիլ: Բոլոր ինչուսորիան պտուտում է նահապետական խիստ սորին տնայնագործութեան շրջանի մէջ: Յայտնի է Վանի շիլան, շալը, Երզնկայի, Ակնի և Արաբկիրի մանիսոն, Երզնկայի, Մարաշի խաւուն և այլն (երեսպրիներ, բաշանիսի ցամքոցներ): Բայց այդ բոլորը նահապետական ձևերով է արդիւնագործւում: Զուհլակի (ոստայնակի) հորը, նրա մի երկու փայտէ ձուղերն ու սանրները—ահա բոլորը... Ուրիշ մի աչքի ընկնող արդիւնագործութիւն չկայ, որի վրայ կանգ առնես: Մնում են հանքային

հարստութիւնները: Ալը և այլն Դէյանը-Ումումիէի ձեռն է, Եւրոպական կազմակերպած վաշխառութեան երկաթէ ձեռքերի մէջը. ժողովրդին ինչ շահ... Գիւմիշխանէի արծաթի փառաւոր հանքերը մշակուած են մարդկային ձեռքի, ձիերի և ջորիների Ֆիզիկական ուժովը. մեքենան բացակայում է, կամ եղածն էլ լաթաշան-բարաշան փնացած հնութիւններ են, որ Եւրոպայում միայն մուգէջում-ներում կը տեսնէք:

Վաճառականութիւնն էլ արդիւնագործութիւնից աւելի առաջ է գնացել: Ամբողջ Տաճկաստանում կայ բաւականաչափ զարգացած մի վաճառականութիւն. բայց նա հայկական նահանգների հետ շատ էլ առնչութիւն չունի: Նրա իսկական շրջաններն են Եւրոպական Տաճկաստանը և ասիականի միայն ծովափերը. Կիլիկիան—Մերսինից մինչև Ադանա, Ալէքսանդրիոյից մինչև Անտիօք, Հալէպ, և մասամբ Այնթափ. Զմիւռնիայից մինչև Աֆիօն-Գարահիսար և Էնկիւրիւ (Փաղափրա), Սամսոն, Կերասոն, Ինեբոլի, Տրապիզոն, Նաֆֆա, Բէյրութ և այլն: Իսկ մեզ հետաքրքրող շրջանում Եւրոպական վաճառականութիւնը մուրք է գործել մի քիչ միայն Կարին—Տրապիզոնի և Սարիշամշի վրայով, Վան—Պարսկաստանի վրայով (շատ քիչ), այն էլ միայն քաղաքներում: Իսկ միւս քաղաքներում—Սուզ, Խարբերդ, Երզնկա, Բաղէշ, Տիգրանակերտ և այլն, նրա միայն խըլճուկ փշրանքներն են հասնում:

Փաղաքներից Դուրս, երկրի բաւական ընդարձակ սահմաններում, ապրանքների փոխանակութիւնը կատարւում է նահապետական ձևով: Փաղաքներում փողը Դարձել է արդէն իբր փոխանակութեան միութիւն: Ամեն բան անցնում է ապրանք-փող, ապրանք կամ փող, ապրանք-փող երրորդութեան օղակներով: Իսկ զիւղերում մինչև օրս էլ փոխանակութեան մեծ մասը կատարւում է ապրանքներով: Ապրանք-փող-ապրանք Ֆորմուլան, որ արդիւնագործող (օրինակ երկրագործ, արհեստաւոր) սպառողի տնտեսական ձեռն է, այնտեղ կրճատւած է: Քիչ ու միչ քաղաքակրթւած երկրում երկրագործը կամ արհեստաւորը նախ պէտք է իր ապրանքը (Ա) ծախի, իրականացնի կամ փողի վերածի (Փ) և ապա այդ փողով նոր ապրանք (Ա) գնի, իր սեփական սպառման կամ գործածութեան համար: Իսկ Տաճկա-Հայաստանի գիւղացին և նոյն իսկ արհեստա-

ւորը յաճախ բաց են թողնում միջին ոչակը—փողը. նրանք փոխում են որոշ չափի ապրանքը՝ որոշ չափի ուրիշ ապրանքի հետ. ինչ որ նա շատ ունի տալիս է այնպիսի մարդու, որն իր ունեցածից չունի և ուզում է ունենալ, կարիք ունի. և այդ երկրորդն ունի այնպիսի մի ապրանք կամ նիւթ, որին առաջինը կարիք ունի:

Բառնում է գիւղացին իր ձիերի վրայ ցորեն, ալիւր կամ մրգեր և տանում նրանց այնպիսի տեղ, ուր ցորենի, ալիւրի կամ մրգերի կարիք կայ և ուր, օրինակ, իւշը կամ պանիրն է առաւել ճաշիս է, ենթադրենք, 4—5 քիլա ցորեն և առնում է մի քիլա իւշ կամ 2—3 քիլա պանիր: Այդպէս է ոչ միայն Տաճկա-Հայաստանում, այլ և ռուսական նոր նւաճւած տեղերում, ինչպէս Ղարսի, Կաղզւանի, Օլթիի, Արդահանի մի քանի գաւառներում: Մինչև օրս էլ Կաղզւանի այգեգործը տանում է իր ծիրանն ու տանձը Գեօլւայ կամ Բասենի գիւղերը և փոխում նրանց իւշի, ցորենի ու պանրի հետ: Այս վերջին տեղերում անգամ փողը շատ քիչ ասպարէզ ունի և նոր-նոր է մուտք գործում ապրանքների փոխանակութեան մէջ: Իսկ աւելի, շատ աւելի յետամնաց տաճկահայկական գաւառներում փողի գործածութիւնն անհամեմատ աւելի սահմանափակ է: Այնտեղ գիւղերում ամեն մարդ արդիւնաբերող է. ամեն ընտանիք իր աշխատանքով ինքն է արդիւնագործում իր անհրաժեշտ իրերի մեծ մասը: Մնացած փոքր մասն էլ ձեռք է բերում փոխանակութեան միջոցով—ապրանք կամ նիւթ տալով ապրանքի փոխարէն:

Տնտեսութեան այս ձևը գիտութեան մէջ յայտնի է «բնական տնտեսութիւն» (Naturalwirthschaft) անունով: Նա թաղաւորում էր միջնադարեան Եւրոպայում, այս օրւան Պարսկաստանի, Զինաստանի ներքին մասերում, աֆրիկական նեղրների, կաբիլների և այլ բարբարոս ցեղերի մէջ: Ֆրանսիան, օրինակ, նոյն տեսակ փոխանակութիւն ունէր Լուդովիկոս XIV-ից առաջ: Եթէ այդպիսի տընտեսութիւն ունեցող մի երկրի կառավարութիւն չափազանց զգուշութիւններով չաշխատի կատարել նրա փոխանցումը բնականից փողային տնտեսութեան՝ երկիրը, նրա ազգաբնակութիւնը կ'ընկնի ծայրայեղ աղքատութեան (պառպերիզմի) մէջ: Նախ պէտք է ոչ ոք տալ ներքին արդիւնագործութեան, հաշորդակցութեան մի-

ջոցները զարգացման, ներքին հրապարակի կամ վաճառանոցի սպեշման ու զարգացման և ապա միայն աստիճանաբար անցնել փողային պնտեսութեան կամ փողային հարկերին:

Քննենք այժմ փողային հարկերի առաջացրած հետևանքները: Քանի շեռ Ղերէբէկերն էին պիրում երկրի մեծ մասին՝ հարկերի մեծագոյն մասը վերցւում էր բերքերով և միշտ չնչին մասը փողով: Իսկ այդքան փողային հարկը շեռ տանելի էր:

Քուրդ բէկերի կողքից գալիս էր կրօնաւորը. նա էլ իր հարկերն էր ուզում. սա պսակադրամ է, միւսը պտղի է, երրորդը հողեորականների հասոյթ է և այլն: Քուրդը և պետութիւնը առնում էին զէնքի ուժով, իսկ հողեորականը կրօնի, յոյսի, մեղքերի քաւութեան, վերջին յապաստանի և յրախտի ուժով: Միայն կրօնական հարկերի էլ մեծագոյն մասը մթերքներով էր առնւում:

Եկաւ պետութիւնը: Նա բանակ է պահում, զէնք է գնում, պայտերազմ է մղում, Ռուսաստանի, Եւրոպայի բոլոր պետութիւնների հետ յարաբերութեան մէջ է: Իսկ այս ամենը փողով, հնչիւն չբանով է լինում: Նա չի կարող հարկը մթերքներով հաւաքել. նրա հարկը փողային է: Նա չի կարող, օրինակ, իր յետպաններին խոսով կամ ցորենով ոռոգիլ պալ... Սկզբներում, ինչպէս արդէն նկատեցինք, նրա փողային հարկերը քիչ էին և երկրի բնական պնտեսութեան համար անգամ քանակի: Իսկ երբ նրանք պետական օր աւուր աճող կարիքների հետ միասին սկսեցին աճել, այն ժամանակ փողային հարկն սկսեց իր աւերիչ յերը:

Գնահատում են այգու աշարը և արաղիէն $2\frac{1}{2}$ —3 ոսկի: Այգու բերքը, ենթադրենք, նոյն իսկ հիանալի է. բայց նրանից բերք չեն ուզում, այլ 270-324 յահեկան հնչիւն չբամ են պահանջում: Այգեպէրը չբամ չունի, իսկ միւրզ գնողները ցորեն, իւշ, պանիր են տալիս. փողով գնող չկայ կամ եղածը չափազանց քիչ է, այնքան է, որ հազիւ կը բաւականացնէր փողային հարկերի 1830-40 ական թւերի չափերին: Ի՞նչ անի այգեպէրը, զոր տանի իր պտուղները. հաղորդակցութեան կանոնաւոր ճանապարհներ չկան, եղածներն էլ անապահով են—քիւրճն է թալանում, աւազակը կողտպում, յաճախ գնդակով էլ սիրտն է ծակում... վերջապէս՝ ներքին վաճառանոց չկայ, եթէ տանի մօտաւոր գիւղը, փողով առնող

չկայ, քաղաքն էլ շատ հեռու է, միրգը փչանում է ճանապարհին, մանաւանդ որ մրգի, ցորենի և այլ պտուղների գինն ընկած է ամբողջ երկրում, բացի ծովափնեայ մեծ քաղաքներից: Նոյնն է և ցորենի ու գարու, այժի և ոչխարի, արտի ու կալածի տիրոջ Դրութիւնը: Փող չկայ, գները կտրուած են, ներքին փողային շուկայ չկայ, իսկ արտահանելու հնար չկայ, որովհետեւ կանոնաւոր և ապահով ճանապարհներ չկան: Բայց փողն այնուամենայնիւ հարկաւոր է պետութիւնն ուզում է իր հարկը փողով:

Ահա այդ ժամանակ օգնութեան է հասնում վաշխառուն, Դրամազլիի ամենասուրոր և ամենակեղեքիչ ու ապարդիւն ձեւի ներկայացուցիչը: Նա կամ գնում է գիւղացու արդիւնքները (ի հարկէ աւելի երկար Դիմացողները միայն) սպանւած, ամենասուրոր գներով կամ նրան տոկոսով փող է տալիս: Յաճախ, շատ յաճախ գիւղացու բոլոր արդիւնքը ծախւում է և ստացւած փողը հազիւ է բաւականացնում միայն բեդէլը-էսկերիէն կամ մի երկու այլ հարկեր ևս: Ապրուստի միջոց այլ ևս չի մնում մինչև յաջորդ բերքը: Եւ նա ստիպւում է նոր ու նոր պարտքեր անել վաշխառուից, կամ գնալ Պոլիս, Կովկաս, Բուլղարիա, Ամերիկա մի քիչ նալդ փող Դատելու, հարկերն ու պարտքերը տալու: Իսկ վաշխառուի տոկոսները հրէշաւոր են: 10-ը ոսկին 4-5 տարուց յետոյ Դառնում է 60-70 ոսկի: Գիւղացին իր ամբողջ ընտանիքով Դառնում է վաշխառուի ճորտը և մի գեղեցիկ օր էլ իր բոլոր շէնքերն ու հողը, այգին ու ստացւածքը տեսնում է նրա ձեռքում, պարտքի տեղ խլւած մեջլիսի, օրէնքի միջոցով:

Աշար հաւաքելու Դէպքում վաշխառու կապալառուն հանդիսանում է մի կողմից իբր հարկահան, իսկ միւս կողմից իբր հացահատիկների և անասունների գնող: Մի կողմից նա սեղմում է գիւղացուն, հարկն է ուզում կանխիկ, իսկ միւս կողմից, իր ագենտների միջոցով ամենաէժան և սուր գներով գնում է գիւղացու վերջին քիւրացորենը, նրա վերջին լուծք եզը կամ մի քանի ոչխարներ:

Ահա թէ ինչո՞ւ 1877-ի պատերազմից յետոյ սկսեց քայքայւիլ Տաճկահայաստանի բոլոր տնտեսութիւնը, նրա շատ զօրեղ հիմքերը:

Եւ քանդուում, կործանուում են անպետութիւններն ու սպառնալիքներն իրար ետեւից: Ինչո՞ւ մշակել Մշու գաղտնի գրախփային այգին, երբ միայն աշարը վճարելու համար ամբողջ բերքը տալիս ես — ձեռք չեն քաշում: Ինչո՞ւ հող ունենալ կամ ինչո՞ւ մշակել այդ հողը, երբ արագիէն ու աշարը, եօլ-փարասնն ու Ղամ ճուռը վերջ ի վերջոյ սորիպում են ծախել այդ հողը մի վաշխառուի, մի աղայի:

Այգիները կորապուում, պորկապու մայր հողը բարձի թողի անուում, ամայանում է: Այն երկիրը, որի մէջ հրէայի արեւելեան վառ երեւակացութիւնը Դրել է մարդկային երջանկութեան յէտալ ղըրախտը, այս օր իր սակաւ թիւ ազգաբնակչութեանն անգամ հրաժարուում է կերակրել:

Կայ պորկապու հող, ջուր, այգի, անդաստան. կան ջրուզ, աշխատասէր ու մշակող ձեռքեր: Բայց հարկերի, փողային ծանր հարկերի ճնշումը քրդի ու աւազակի թալանը, կառավարութեան սխալների կատարեալ անիշխանութիւնը մի աներեւոյթ պատի պէս խանգարում են մարդկային երջանկութեան աղբիւրը կազմող մայր երկրի և աշխատաւոր մարդկութեան միացմանը: Հողը խուպանանում, փչանում է, իսկ աշխատաւոր դիւղացին գաղթական, մուրացիկ դառնում: Եւ այս ընդորի արմատական պատճառը հարկերի փողային ծելի եւ նրանց անհամաչափ մեծութեան մէջն է թագնաւած:

Զարմանալին այն է, որ գոնեցան մարդիկ, որոնք գերմանական ու անգլիական մամուլի մէջ սկսեցին ճառել, թէ Տաճկահայաստանի անպետական այս Դրութիւնը ծնաւ կապիտալիզմի մոլոր գործելու շնորհիւ. նրանք քարոզեցին, որ Տաճկահայաստանում ծագեց ըանկորական խնդիր: Նրանք հաստատեցին, որ «բանկերը և այլ կրեդիտային հաստատութիւնները հիմք են բռնել Հայաստանում», որ «մոմի և մեքաքսի գործարաններ են հաստատուել ¹⁾»... Այդ մարդիկը գրում էին այն բանի մասին, որն իրենց համար աւելի անծանօթ էր, քան չինարէն լեզուն... Նրանք հայ գաղթականին, կամ քրդի ու վաշխառուի ձեռքից սար ու քոլ ընկած հայ մուրացիկին պրոլետարիատ տիպոյսը տւին և նրանց վզին փաթաթեցին զանազան թէօրիաներ:

¹⁾ Տես Neue Zeit 1896 թ. ամառաւ համարները:

Տնտեսական համանման մի տաճնապ մենք տեսնում ենք Ֆրանսիական պատմութեան մէջ, XVII դարի վերջը և XVIII-ի սկիզբները, Լիւդովիկոս XIV-ի թագաւորութեան վերջին տարիներում: Երբ մարդ կարդում է Բուազիլիերի և մարշալ Վոբանի գրութիւններն այդ ժամանակաւ Ֆրանսիայի ժողովրդի տնտեսական թշուառութիւնների մասին՝ մազերը փշաքաղում, մարդու մարմնով սարսուռ է անցնում: Երբ Լուդովիկոս XIV-ն սկսեց իր անմիջ ու երկար պատերազմներն Իսպանիայի թագի ժառանգութեան համար, Ֆրանսիայի ծախքերը հասան հրէշաւոր չափերի, համեմատելով իր այն ժամանակի ազգային հարստութեան հետ: Իսկ այդ հարստութիւնն արդէն բաւական աճել էր. արդէն Կոլբերի շինող ձեռքերը, նրա հովանաւորող կամ խնամող (protectioniste) տարիքների սխալէմը գործել էին. երկիրն արդէն բաւական բարձրացել էր: Բայց պատերազմները փողի պահանջը խստացրին և Լուդովիկոս XIV-ը փոխեց մինչև այդ ժամանակ գոյութիւն ունեցող հարկային բնական սխալէմը (մթերքներով հարկ առնելը) և մրցրեց զուր փողային հարկեր և այն էլ բաւական զօրեղ չափերով: Մի կողմից պատերազմների քայքայիչ ազդեցութիւնը, միւս կողմից հարկերի վերածնելը քայքայեցին Կոլբերի ծաղկեցրած Ֆրանսիայի տնտեսութիւնը... Եւ ով կարող է պնդել, որ երկրի տնտեսական այդ քայքայումը չդարձաւ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան արմատական պատճառներից մէկը:

Աւելորդ է ենք համարում առաջ բերել այստեղ նորագոյն քաղաքատնտեսութեան հանճարեղ ներկայացուցիչներից մէկի կարծիքը: Այդ հարցի առթիւ. նա շատ խրատական է և մասամբ պարունակում է իր մէջ մի մարգարէացում նաև Տաճկաստանի տնտեսական ներկայ կրիզիսների մասին:

Ապրանքային արդիւնագործութեան որոշ աստիճանի զարգացման և որոշ մեծութեան ժամանակ փողի պաշտօնը, իբր վճարման միջոցի՝ շուրս է գալիս ապրանքների փոխանակութեան շրջանից: Փողը դառնում է ընդհանուր մի ապրանք բոլոր գործողութիւնների ժամանակ: Հարկերը, ռենտան և ուրիշ դրանք նման արդիւնքներով կարարւող վճարումները վերածւում են փողային վճարների: Թէ որքան խիստ կերպով այդ փոփոխութիւնը կախած

է արդիւնագործութեան պրոցեսիւնն շահնուր պայմաններից՝ ցոյց է տալիս, օրինակ, Հռովմի կայսրների արած անցաջող կրկնակի փորձը բոլոր հարկերը փոշով հաւաքելու: Ֆրանսիայի գիւղական ազգաբնակչութեան զարհուրելի աշքարտութեան պատճառը Նիւշովիկոս XIV-ի ժամանակ, որ այնքան պերճախօս կերպով նկարագրում են Բուլղարները, մարշալ Վոբանը և ուրիշները՝ ճշմիտ մեծաքանակ հարկերն էին, այլ և բնական բերքերով վերցնող հարկերի փողային վերածելը: Եթէ, միւս կողմից, հողային ռենտայի բնական ձևը (բերքերով), որ կազմում է Ասիայում պետական հարկերի գլխաւոր տարրը, հիմնուում է այնտեղ արդիւնագործութեան պայմանների վրայ, որոնք կրկնում են բնական երևոյթների պէս անփոփոխ կերպով՝ հողային բնական ռենտան էլ իր կողմից պահպանում է արդիւնագործութեան նախկին ձևերը: Դրանու մէջ է տաճկական կայսերութեան ինքնապաշտպանութեան զաղտնիքներից մէկը: Եթէ Եւրոպայի կողմից ճապոնիայի վզին փաթաթած նորագոյն առևտուրը կ'առաջացնի բնական ռենտայի փողային ձևի շարձելը՝ այն ժամանակ նրա օրինակելի երկրագործութեան վերջը կը գաջ. այդպիսի երկրագործութեան գոյութեան համար անհրաժեշտ նեղ տնտեսական պայմանները կը կործանուին: (Կարլ Մարքս, Վապիտար, էջ 58, հատոր I, ռուսերէն թարգմանութեան 94 երեսը):

Այս քաղաքացի պարզ երևում է, որ Մարքսը գուշակում է երկու բան. ա) եթէ Տաճկաստանն անցնի հարկերի փողային ձևին՝ նրա երկրագործութիւնը կամ առհասարակ նրա ամբողջ տնտեսութիւնը կը կորցնի իր կայունութիւնը, կը քայքայւի—և բ) բնական հարկային սխտէմը կարելի է միմիայն այն ժամանակ անվնաս կերպով վերածել փողային սխտէմի, երբ երկրի ներքին արդիւնագործութիւնը բաւականաչափ կը զարգանայ, կը կատարելագործուի: Արդ, այդ երկու գուշակութիւններն էլ մենք տեսնում ենք այսօր լիովին իրականացած:

Հռովմի կայսրները երկու անգամ ուղեցին մայրնել իրենց լայնածաւալ ու հարուստ կայսերութեան մէջ հարկերի փողային ձևը, բայց երկու անգամ էլ փորձն անցաջող չուրա եկաւ. հարկերը հաւաքել անհնարին եղաւ, որովհետեւ ժողովրդի ձեռին փող չկար,

այլ միայն նիւթ, արդիւնք, ապրանք: Սրա պատճառը երկրի ար-
դիւնագործութեան խսկ վիճակն էր: Արդիւնագործութիւնը շեռ
ևս այնքան չէր զարգացել, աշխատանքի բաժանումը երկրի ներ-
սում շեռ ևս այնքան չէր առաջացել, որ զուր օտարանքային ար-
դիւնագործութիւնը թաղաւորէր և փոշը շառնար ապրանքների
փոխանակութեան և վճարումների շէպքում իբր մի անհրաժեշտ
միջոց: Արդիւնագործողը շեռ ևս ամեն բան չարմարեցնում էր իր
սեփական գործածութեան եւ ոչ փոխանակութեան կամ առետրի
տեսակէտին: Քաղաքայնայնական լեզուով եթէ խօսենք, պիտի
ասենք այսպէս. արդիւնագործողն ապրանքներ չէր արտադրում,
այլ միայն սեփական գործածական արժէքներ (valeurs d'usage
կամ потребительная стоимость): Իսկ այդ տեսակ արդիւնա-
գործութեան համապատասխանում է միայն բերքերի, արդիւնա-
գործողի գործածութիւնից աւելացած բերքերի փոխանակութիւն
և ոչ ապրանքների առևտուրը փոշի միջոցով:

Հարկերի հետ նոյն փորձն արեց և Լիւդովիկոս XIV-ը, որ և
Ֆրանսիայի երկրագործ մեծամասնութեանը հասցրեց անտեսական
սնանկութեան ու սովի գիրկը:

Դեռ այս առաջադար երկիրների համար է... Կուլտուրական
զարգացման գլուխը կանգնած երկիրներն անգամ չեն կարողանում
տանել կենսական անզուգահեռական կամ ոչ համաչափ զարգացման
երեւոյթներ: Մարդկային անտեսական կեանքի բոլոր կողմերը զար-
գանում են իրար հետ միասին, մի որոշ համաչափութիւն պահպա-
նելով իրար մէջ: Զի կարող արդիւնագործութիւնը զօրեղ կերպով
զարգանալ, իսկ ապրանքների փոխանակութիւնը՝ յետ մնալ: Նոյն-
պէս էլ չի կարելի անվնաս կերպով բնական հարկերը վերածել փո-
շայինի այն ժամանակ, երբ արդիւնագործութիւնն ու ապրանքների
փոխանակութիւնը յետ են մնացած շեռ ևս...

Բայց «կարիքը լոգիկա չի ճանաչում»... Տաճկաստանն էլ, կա-
րիքի տակ ճնշւած, ոչ գիրտութիւն, ոչ ուրիշ ազգերի փորձառու-
թիւն, ոչ էլ լոգիկա է ճանաչում:

Հռովմը, Ֆրանսիան, Անգլիան չունէին այնպիսի մրցակիցներ,
որոնք ամեն բանով աւելի զարգացած և ուժեղ լինէին, քան իրենք:
Իսկ Տաճկաստանին ամենօրեայ ճնշող իրականութիւնն ստիպում է

փողի նոր ու նոր աշխերներ գտնել: Վաղըս փողային Կոնստան-
թինան անցած Եւրոպան նրան ճակատագրաբար ստիպում է հար-
կերն ու բոլոր միւս վճարումները փողով կատարել: Կրօնպալի թըն-
շանօթի գործարանը ցորեն, գարի, խոտ չի ընդունում իր տած
զէնքերի համար... Ռուսական, Անգլիական և այլ պատերազմական
պարպերի փոխարէն Տաճկաստանից խոտ ու դարման չեն վերցնում:
Տաճկական բաղմաթիւ շեպականներին ու կոնստանթին, վեզիրին
ու փաշաներին, ոստիկաններին ու լրտեսներին չի կարելի ցորնով
կամ դարմանով ուժիկ տալ... Օսմանը կամ նրա հայր Երթոգորուլը,
Բեյրութան-բէյը կամ Եգիշլարը կարող էին իրենց բոլոր ծառայող-
ներին հողով, ոչխարով ու ցորենով վճարել, նրանք հնչիւն դրամի
կարիք չաւ քիչ էին զգում, որովհետեւ իրենց բոլոր անհրաժեշտու-
թիւնները կամ իրենց ճորտերն էին արդիւնագործում կամ պակա-
սածն էլ ձեռք էին բերում ոչխար, իւղ, ցորեն տալով: Իսկ այսօր-
ւան մի պետութիւն, որ յարաբերութեան մէջ է կոլւրուրապէս զար-
գացած պետութիւնների հետ, չի կարող աւարել առանց մեծաքա-
նակ հնչիւն գումարների: Ոչ էլ նա կարող է սպասել՝ մինչև որ իր
երկրի արդիւնագործութիւնը զարգանալ, որ յետոյ հարկերն ու-
ռենտան փողի վերածէ... մինչև այդ՝ շատ ջուր կը հոսէ և շատ
դարման կը տանի. ամէն ինչ նրա ձեռքից կ'երթայ, նրա քաղաքա-
կան կեանքը կը կորչի, ամէն ինչ ձեռքից դուրս կը գայ:

Զօրեղ ու զարգացած արդիւնագործութեան տէր երկիրները
մտնում են մրցման յետամնաց երկիրների հետ և նրանց Կոնստան-
թինանքը քայքայում, սնանկութեան դուռն են հասցնում... Եւ այս
օր միայն Տաճկաստանը չէ, որի ժողովուրդը սնանկութեան, հա-
մարձակ աղքատութեան ու պարբերական սովերի ճահճի մէջն է լո-
ղում. այդպէս են և բոլոր միւս յետամնաց երկիրների ժողովուրդ-
ները քիչ կամ շատ չափերով: Տաճկաստանն աւելի յետամնաց է,
քան նրանցից շատերը. նրա ներքին պայմաններն աւելի քայքայիչ
են, քան միւսներինը. նրա բռնած աշխարհագրական դիրքն աւելի
բաղձալի, աւելի ցանկալի ու զբաւումի ակորժակ զրգոող է և ալլն,
և ալլն... և ահա նրա ժողովրդի դրութիւնն աւելի տաժանելի,
աւելի սպանիչ վիճակի է հասել. նա սնանկացել է: Այդ սնանկու-
թիւնը ծնեցրել է դժգոհութիւն, բողոք, խառնակութիւն և նոյն
իսկ ապստամբութիւն:

(Վերջը լաջորդ անգամ)